ԵՐԻՏԱՍԱՐԴ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԻ 18-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

ՀՍՍՀ ԴԱ պատմության ինստիտուտի լավագույն ավանդույթներից է երիտասարդ գիտաշխատողների, ասպիրանտների ու լաբորանտների ամենամյա նստաշրջանը։ Սեպտեմբերի 25—29-ը Կիրովականում տեղի ունեցավ երիտասարդ պատմաբանների հերթական 18-րդ նստաշրջանը՝ Կիրովականի պետական մանկավարժական ինստիտուտի մասնակցությամբ։ Նստաշրջանը բացեց և մասնակիցներին ողջունեց ինստիտուտի ռեկտոր, ՍՍՀՄ ԴԱ թղթակից անդամ Ս. Մերզելյանը։ «ՍՄԿԿ Կենտկոմի հունիսյան պլենումի որոշումների լույսի ներքո ՀՍՍՀ ԴԱ պատմության ինստիտուտում կատարվող աշխատանքների մասին» զեկուցումով հանդես եկավ ինստիտուտի գիտական քարտուղար, պատմական գիտությունների թեկնածու Վ. Հովակիմյանը։

Նստաշրջանում լսվեցին շուրջ քսան զեկուցումներ, որոնք վերաբերում էին հայ ժողովրդի քաղաքական ու մշակութային պատմության հարցերին, սոցիալ-տնտեսական հարաբերություններին, հայկական գաղթօջախներին։ Թեմատիկ առումով բովանդակալից զեկուցումներ կարդացվեցին հայ ժողովրդի ֆեոդալիզմի դարաշրջանի պատմության հարցերի վերաբերյալ։ Նստաշրջանի մասնակիցները հետաքրքրությամբ լսեցին Վ. Տեր-Ղևոնդյանի «Կիլիկյան Հայաստանի և Անտիոքի իշխանության հարաբերությունները XIII դ. 20-ական թվականներին» զեկուցումը։ Աղբյուրագիտական պրպտումների արդյունք էին Ս. Ղուկասյանի («Հովսեփ Արղության սրագրությունները ու նամականին որպես XVIII դարի 2-րդ կեսի հայ ազատագրական շարժումների պատմության աղբյուր») և Ա. Գրիգորյանի («Ս. Գ. Գմելինը և նրա ուղեգրությունը հայերի մասին») զեկուցումները։ Վ. Փաֆազյանը «Թավրիզ—Հալեպ առևտրական մայրուղին XVII դարում ըստ Կոստանդին Ջուղայեցու «Աշխարհաժողովի» վերնագրով զեկուցման մեջ հավուր պատշաճի արժեքավորել էր հայ պատմագիտությանը գրեթե անծանոթ «Աշխարհաժողով» ձեռնարկը։ Նրկի հաղորդած վկայությունների հիման վրա հեղինակը ճշգրտումներ էր կատարել առևտրական ճանապարհների և ընթացուղիների որոշ հատվածների վերաբերյալ։ Հ. Թորոսյանը («Երկրագործական մշակույթն Արևելյան Հայաստանում XVI—XVIII դարերում») նշեց, որ հայ շինականի երկրագործական աշխատանքի կարևոր բնագավառներն են եղել հացահատիկային կուլտուրաների, բամբակի, վուշի, բանջարաբոստանային և այլ կուլտուրաների մշակումը։ Է. Թաշիրյանի զեկուցման մեջ [«Վանանդեցիների դերը ազատագրական և լուսավորական շարժումներում (XVII դ. վերջ—XVIII դ. սկիզբ)»] վեր հանվեց Վանանդեցիների խաղացած դերը XVII դարի վերջերի հայ ազատագրական և լուսավորական շարժումների պատմության մեջ, արժեքավորվեց նրանց բոլորանվեր գործունեությունը հայ մշակույթի զարգացման գործում։ Նստաշրջանի մասնակիցները ուշադրությամբ ունկնդրեցին Վ. Պողոսյանի «Մարշալ Մյուրատի ազգային պատկանելիության հարցի շուրջ» զեկուցումը։ Զեկուցողը հանգեց այն եզրակացության, որ ֆրանսիական հայտնի մարշալի հայկական ծագման վերաբերյալ գոյություն ունեցող տեսակետները չեն համապատասխանում պատմական իրականությանը։

Նստաշրջանում կարևոր տեղ էր հատկացվել հայ ժողովրդի նոր և նորագույն պատմության հարցերին։ Մեծ հետաքրքրությամբ լսվեցին Դ. Կիրակոսյանի («Արևելյան Հայաստանի քաղաքային բնակչության սոցիալական կազմը XIX դարի 80—90-ական թվականներին»), Ա. Միքայելյանի [«Հայ ազգաբնակչության տեղաբաշխումը Վանի նահանգում XIX դարի վերջին—XX դարի սկզբին (ժողովրդագրական ակնարկ)»] և Ա. Գալոյանի [«Անդրկովկասյան սեյմի և Թուրքիայի միջև Տրապիզոնում տեղի ունեցած խաղաղության բանակցությունները (մարտ-ապրիլ, 1918 թ.)»] զեկուցումները։

Սովետական Հայաստանի հասարակության պատմության համեմատաբար քիչ ուսումնասիրված պրոբլեմներին էին նվիրված Վ. Դալլաքյանի [«ՀՍՍՀ բանվոր դասակարգը և պետական ապարատի բարելավումը (1928—1932 թթ.)»] և Ռ. Օնանջանյանի («Միգրացիայի մոտիվների ազդեցությունը միջանձնային ազգային հարաբերությունների վրա») զեկուցումները։

Նստաշրջանի մյուս խումբ զեկուցումները վերաբերում էին հայկական գաղթօջախների (Հունաստան, ԱՄՆ և Հունգարիա) պատմությանը այս կամ այն հարցին։ Դրանց վերաբերյալ բովանդակալից զեկուցումներ կարդացին Ա. Սիմոնյա-

ը («Հայագիտության հարցերը հունգարալեզու հայ պարբերականներում XX դարի սկզբներին»), է. Ստեփանյանը («Սովետական Հայաստանի նվաճումների պրոպագանդան հունահայ «Արձագանք» թերթում (1928—1929 թթ.)»), Գ. Հակոբյանը («Հայերն ԱՄՆ-ի տնտեսական կյանքում (XIX դարի վերջ—XX դարի սկիզբ)»), Ս. Մանասերյանը («Հայրենակցական միությունների դերը ամերիկահայ համայնքի կյանքում»)։ Հատկանշական է, որ զեկուցողները քաջատեղյակ էին ոչ միայն ուսումնասիրության առարկա գաղթօջախի հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքին, այլև այն երկրների պատմությանն ու լեզվին, որտեղ գտնվելիս են եղել այդ գաղթօջախները։

Նստաշրջանի եզրափակիչ նիստում զեկուցումների շուրջ տեղի ունեցավ մտքերի աշխույժ փոխանակություն և զեկուցումների գիտական քննարկում։ Ելույթներով հանդես եկան ինստիտուտի դիրեկտոր, պատմական գիտությունների դոկտոր Հ. Ավետիսյանը, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Ղարիբջանյանը, ԱԹԵՆՔի ակադեմիայի իսկական անդամ, պատմական գիտությունների դոկտոր Հ. Բարթիկյանը, պատմական գիտությունների դոկտոր Հ. Պողոսյանը, պատմական գիտությունների թեկնածուներ Ժ. Անանյանը, Վ. Ղազարյանը, Ռ. Մաթևոսյանը, Պ. Ջորանյանը, Դ. Առաքելյանը և ուրիշներ։ Ելույթ ունեցողները միաձայն շեշտեցին նստաշրջանի պատշաճ գիտական մակարդակը։

Նստաշրջանի արդյունքներն ամփոփեց ինստիտուտի դիրեկտորի տեղակալ, պատմական գիտությունների դոկտոր Վ. Բարխուդարյանը։

ԱՂԱՎՆԻ ՈՒԹՈՒՋՅԱՆ